ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ
Մայր Աթոռի տպարանի տնօրեն

ԼՈՒՍԱՏՈՒ ԾՐԱԳ ՀԱՎԱՏՔԻ ՕՋԱԽՈՒՄ

17-18-րդ դարերից ակնհայտորեն անհրաժեշտություն էր զգացվում Մայր Աթոռի միաբանության համար տպարան ունենալ, որը բավարարելու էր եկեղեցական գրականության կարիքը, և երկրորդ, որ այն նպաստելու էր հանուն Հայոց Եկեղեցու հոգևոր ինքնության մղվող դավանաբանական պայքարին:

Եվ ահա, վերջապես, 1771 թվականին Հայաստան աշխարհի վրա բացվեց այդ լույսը: 230 տարի է անցել այն օրից, երբ Սիմեոն Ա Կաթողիկոս Երևանցու անմիջական նախաձեռնությամբ և հոգաբարձությամբ Ջուղայեցի Գրիգոր աղայի հիմնադրվում է Մայր Աթոռի տպարանը, որը Հայաստանի և Ս. Էջմիածնի համար առաջինն էր Կովկասում:

Տպարանի առաջին հրատարակությունը Սիմեոն Երևանցու 1772 թ. լույս տեսած «Գիրք աղօթից, որ կոչի Զբոսանք հոգեւորաց» գործն էր: Տպարանի աստիճանական տեխնիկական վերազինմանը զուգընթաց անհրաժեշտություն էր զգացվում ունենալ նաև թղթի գործարան: Եվ ահա 1776 թվականին շահագործման է հանձնվում թղթի գործարանը:

Հավաքելով հմուտ վարպետների, գործարանը որպես թղթի համար անհրաժեշտ հումք օգտագործում է բամբակը և ուրիշ այլ նյութեր: Տպարանի աշխատողների հիմնական կորիզը եղել է հոգևորականությունը: Նրանց նվիրված աշխատանքի շնորհիվ ստեղծվում է տառաձուլարան, ուր ձուլվում են հայկական տառեր և զարդանախշեր: Շնորհիվ Սիմեոն Կաթողիկոսի անհոգդողդ կամքի, հաջողվում է ի կատար ածել ազգի և Եկեղեցու փայփայած երազը:

Հեշտ չի եղել տպարանի 230-ամյա գործունեությունը: Այն անցել է դժվարին ճանապարհ, բայց Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալները համառորեն պայքարել ու հաղթահարել են ամեն մի խոչընդոտ, իրենց անձնական նվիրումով կարողացել են աշխատեցնել տպարանը և ստեղծագործել՝ թողնելով այնպիսի ժառանգություն, որով զգալի մի առաջընթաց է ապրել մեր մշակույթը:

Տպարանի արժեքավոր հրատարակություններից են. «Աստուածապաշտութիւն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ», Մեսրոպ Տեր-Մովսիսյանի «Նկարագրութիւն վարուց Ցովասափու որդւոյ թագաւորին հնդկաց»: Մեկը մյուսի ետևից տպա-

գրվում են՝ «Տոնացոյց», «Կարգ թաղման կարգաւորաց», Հովսեպոս Փլաբիոսի «Գիրք պատմութեանց» և մի շարք այլ հրատարակություններ: Նյութական անբնաստ պայմաններում անգամ լույս են ընծայվում «Ատենի ժամագիրք»-ը, «Ջեռաց ժամագիրք»-ը և «Շարակնոց»-ը:

19-րդ դարից նոր թափ է հաղորդվում տպարանին, և այդ թվականներին տպագրված արժեքավոր գրքերից են՝ Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանի «Ստորագրութիւն Սբ. Էջմիածնի եւ հինգ գաւառացն», «Ջայնքաղ շարական», «Մաշտոց», «Հարիւր եւ չորս սուրբ պատմութիւն», իսկ 1868 թվականից լույս է տեսնում «Արարատ» ամսագիրը, Մայր Աթոռի տպարանում է իրականացվել Ս. Գրիգոր Լուսավորչի «Ցաճախապատում ճառք»-ի հրատարակությունը: Հոգևոր զարթոնքի վառ ապացույցներից է և այն, որ այս շրջանում բացվում է բարձրագույն հոգևոր դպրոց՝ Գևորգյան Ճեմարանը:

1889 թվականին, Մատթեոս Ա Կաթողիկոսի օրոք, տպարանը տեղափոխվում է նոր՝ այժմյան շենք: Գրական գործունեությունն այնքան բուռն է եղել Ս. Էջմիածնում, որ 1895 թվականին տպարանն իր անմիջական մասնակցությունն է բերել Պետերբուրգում բացված գրքերի ցուցահանդեսին:

Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսի օրոք է՛լ ավելի է թափ առնում տպարանը, ի գնահատություն որի 1905 թվականին ռուսաց թագուհին տպարանին նվիրում է ձեռքի պատճենահանող մեքենա, որն այժմ իբրև թանգարանային մասունք պահվում է Էջմիածնի քաղաքային տպարանում: Անցյալ դարասկզբին տպարանում աշխատում էին 45 մարդ, որոնց նվիրված աշխատանքի շնորհիվ տպագրվում են շատ արժեքավոր գործեր. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի «Հայոց նոր վկաներ», Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղեր» և «Հայ ժողովրդական առասպելներ», Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան» և այլ արժեքավոր գրքեր:

Տպարանի գործունեությունն ընդհատվում է 1919-20 թվականներին: Հայաստանում երբ հաստատվում են սովետական կարգեր, տպարանը հանձնվում է տեղի իշխանությանը, որը բացասական ազդեցություն է ունենում Մայր Աթոռի հոգևոր և մշակութային ընդհանուր գործունեության վրա: Դադարեցվում են հոգևոր գրականության հրատարակությունները, տպարանից հեռացվում են մի շարք հոգևորականներ, որոնք լավագույն մասնագետներն էին իրենց գործում: Աստիճանաբար տպարանը կորցնում է իր դեմքը, քանի որ տեղական իշխանությունը չուներ տպարանի աշխատանքային առօրյան ապահովելու հնարավորություն: Այդ տարիներին տպագրվում էր միայն տեղական «Կոլտնտեսային ֆրոնտ», հետո՝ «Էջմիածնի կոլտնտեսական» թերթը: 1933-34 թվականներին վերջնականապես փակվում է տպարանը, եղած գույքը և տառատեսակները հանձնվում են նոր կազմակերպվող տեղի տպարանին, իսկ Մայր Աթոռի տպարանի շենքը տրվում է մեքենատրակտորային կայանին: Շենքի երկրորդ հարկը հատկացվում է բնակության համար:

1957 թվականին շենքը ամբողջությամբ վերադարձվում է Մայր Աթոռին: Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի անմիջական հետևողական ջանքերի շնորհիվ սկսվում է նրա հիմնական նորոգումը: 1958 թվականից ամերիկահայ բարերարների նվիրաբերած գումարներով արդեն ստացվում են տպարանին անհրաժեշտ նորագույն մեքենաներ և սարքավորումներ՝ Ամերիկայից և Գերմանիայից:

Տպարանին անհրաժեշտ էին մասնագետներ, որի համար Վեհափառ Հայրապետի հրամանով ընտրվում են ութ երիտասարդներ և ուղարկվում մասնագիտանալու պոլիգրաֆիական գործին (դրանցից մեկը տողերիս հեղինակն է):

1961 թվականի ապրիլի 12-ին սկսվում են տպարանի մեքենաների մոնտաժման աշխատանքները: Գրեթե մեկ տարի անց տպարանը պատրաստ էր լրիվ կարողությամբ աշխատելու: Հիշում եմ տպարանի գործարկման օրը, երբ բոլոր տեղամասերի մեքենաները փորձարկելուց հետո սկսվեց պաշտոնական արարողությունը և տպարանը օրհնվեց Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից: Սույն արարողությանը հոգևորականներից բացի ներկա էին հյուրեր արտասահմանից, պետական պաշտոնյաներ, ներկայացուցիչներ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայից:

Վեհափառ Հայրապետը բացման արարողությանը նվիրված հավաքույթում, խոսելով իրեն հատուկ խաղաղ տոնով, ասաց. «Ես կարծում եմ, որ տպարանը ռազմավարական նշանակության հաստատություն է, և մենք չենք կարող նրա ռազմավարական այս կողմը ապահովել, ուստի նպատակահարմար եմ գտնում այն հանձնել Հայաստանի Գիտությունների կաճառին»:

1962 թվականի նոյեմբերին տպարանը կոչվեց «ԳԱ-ի Էջմիածնի տպարան»: Ծուրջ 30 տարիների ընթացքում ԳԱ Էջմիածնի տպարանում տպագրվել են գիտական, ակադեմիական, դասական և ժամանակակից գրականությանն ու մատենագրությանը վերաբերող բազմաթիվ գրքեր ու ամսագրեր:

1991 թվականի հունիսին տպարանը վերջնականապես հանձնվեց իր իսկ տիրոջը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հիմնովին վերանորոգվեց: Աստվածաշնչային Ընկերությունը տպարանին նվիրեց ժամանակակից նոր մեքենաներ և սարքավորումներ:

Մայր Աթոռի տպարանը, որն այս տարի նշում է իր հիմնադրման 230 տարին, ետ չի մնում Հայաստանի լավագույն տպարաններից, քանի որ գտնվում է Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Տպարանն ունի բոլոր հնարավորությունները իրականացնելու բարձրակարգ տարբեր հրատարակությունների տպագրությունը:

Վերջին այս տասը տարին ևս տպարանի համար հոբելյանական է: Այս ժամանակահատվածում տպարանում լույս են տեսել բազմաթիվ գրքեր և քարոզթերթիկներ, որոնց գնահատականը կտա ինքը՝ ընթերցողը: Այժմ, երբ հավատքը վերստին

ծավալվում է հայ ընտանիքներում, մեր հոգևոր հայրերը ջանում են տպագրել հայ մարդու հավատքի ճանապարհը լուսավորող գործեր:

Տպարանն իր գոյության վերջին այս տասը տարիների ընթացքում տպագրել է շուրջ մեկ հարյուրամյակ Մայր Աթոռում չտպագրված գրքեր՝ «Ատենի ժամագիրք», «Մաշտոց», «Մաշոց», «Շարակնոց», Օրմանյանի «Համապատումը», կրոնի դասագրքեր և շատ այլ հոգևոր գրականություն: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով նախապատրաստվում են տպագրության Աստվածաշնչյան մեկնությունների հայկական միջնադարյան ինքնուրույն և թարգմանական բնագրերը՝ մի քանի տասնյակ հատորի հասնող առանձին մատենաշարով:

Հատկապես բեղմնավոր են եղել տպարանի՝ հոբելյանական այս տարվա աշխատանքները: Կոլեկտիվի տասնյոթ լավագույն մասնագետները ջանում են իրենց նվիրյալ աշխատանքով կատարել 1700-ամյակի բոլոր հանձնարարականները: